


ԳՐԻԳՈՐ
ՄԵՍՐՈՊԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԿԵՆՍԱՄԱՏԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ

8

ГРИГОР МЕСРОПОВИЧ
ГРИГОРЯН
БИБЛИОГРАФИЯ

ARMENIAN REPUBLIC NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HONORED SCIENTISTS

8

GRIGOR M. GRIGORYAN
BIBLIOGRAPHY

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2019

YEREVAN
IAE PUBLICATION 2019

1684527

ԿՐԿԵՕՐՈՒՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՍՏԱԿԱՆԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

8

ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կազմող՝ Սաթենիկ Խուրշուդյան



ԵՐԵՎԱՆ
ՀԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

11
1684527

ՀՏԴ 94(479.25)
ՊՄԴ 63.3(53)
Գ 885

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝
Գագիկ Սարգսյան


Գ 885 **Գրիգոր Գրիգորյան: Կենսամատենագիտություն** / Կազմ. Ս. Խուր-
շուդյան: – Երևան, ՀԱԻ հրատարակչություն, 2019, – 32 էջ. – (Վաստա-
կաշատ գիտնականներ 8):

Գրքույկը նվիրված է վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանին: Ներկա-
յացված է կենսագրությունը, գիտական աշխատությունների ցանկը՝
համառոտ վերլուծությամբ: Նախատեսված է վիմագրագետ-պատ-
մաբանների համար:

ՀՏԴ 94(479.25)
ՊՄԴ 63.3(53)

ISBN 978-9939-9208-4-9

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2019



ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Մեսրոպի Գրիգորյանը ծնվել է 1930 թ. մարտի 2-ին Հյուսիսային Օսեթիայի Վլադիկավկազ քաղաքում՝ հոգևորականի ընտանիքում: Հայրը՝ Տեր Մեսրոպը՝ ծնունդով Բիթլիսից, տեղի միակ հայկական եկեղեցու քահանան էր. Ուսյալ և բանիմաց մի մարդ, որ կրթություն էր ստացել Էրզրումի Սանասարյան վարժարանում: Մայրը՝ Շուշանիկը, ծնվել էր Սարիղամիշում. Տեր Մեսրոպի հետ ընտանիք կազմելով՝ նրան պարգևել էր 12 երեխա: Նրանցից երկուսը՝ Արգարը և Մկրտիչը գոհվեցին Հայրենական մեծ պատերազմում:

1937 թ. Գրիգորյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան, որտեղ ապագա գիտնականը հաճախում է Օրջոնիկիձեի անվան թիվ 11 դպրոց՝ սովորում մինչև 8-րդ դասարան: 1947 թվականին Գրիգորյանն ընդունվում է Էջմիածնի հոգևոր ճեմարան, միաժամանակ ուսանելով Էջմիածնի գիշերային միջնակարգ դպրոցում (քանի որ միջնակարգ

կրթությունը թերի էր): Դպրոցն ավարտում է, իսկ ճեմարանական կրթությունը կիսատ թողնում: 1950–1954 թվականներին Գրիգորյանն ընդունվում և ավարտում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետը: Այնուհետև գործուղվում է Եղեգնաձորի շրջան, նշանակվում Հորս գյուղի դպրոցի տնօրեն: Վերադառնալով Երևան 1956 թ. Գրիգորյանն աշխատանքի է անցնում Հայպետհրատում՝ որպես ավագ սրբագրիչ, ապա նաև թիվ 31 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցիչ:

Նրա գիտական հետաքրքրությունները սկսում են ձևավորվել արդեն Եղեգնաձորում, ուր շրջելով մերձակա բնակավայրերը, ուսումնասիրում է հայկական միջնադարյան հուշարձանները և գրառում դրանց որմերին փորագրված վիմական արձանագրությունները: Ընտանիքում և ուսումնառության տարիներին ստանալով պատմագիտական և լեզվագիտական (նաև գրաբար) հիմնավոր գիտելիքներ Գր. Գրիգորյանը հետագա ողջ գործունեությունը նվիրում է հայկական վիմագրերի ուսումնասիրությանը:

1962 թ. նա սկսում է աշխատել ԳԱԱ-ի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ վիմագրության բաժնում: Երկար ճանապարհ անցնելով՝ հասնում մինչև գիտության վաստակավոր գործչի կոչման:

Գր. Գրիգորյան գիտնականի ձևավորմանը մեծապես նպաստեց նրա աշխատանքային միջավայրը, որը հնարավորություն տվեց շփվելու հայագիտության, վիմագրագիտության նշանավոր ու վաստակաշատ այնպիսի գիտնականների հետ, ինչպիսիք են Սեդրակ Բարխուդարյանը, Կարո Ղաֆադարյանը, Բաբկեն Առաքելյանը:

1963 թվականին «Պատմա-բանասիրական» հանդեսում հրատարակվում է ապագա գիտնականի առաջին գիտական հոդվածը՝ «Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին» վերնագրով:

Ի սկզբանե, Գր. Գրիգորյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնն է դառնում չքնաղ Սյունյաց աշխարհը, նրա միջնադարյան պատմության տարաբնույթ խնդիրները, պատմա-մշակութային հուշարձանները, վանական հաստատությունները՝ որպես կրոնական, ուսումնական, գիտական կենտրոններ:

1967 թվականին Գր. Գրիգորյանը պաշտպանում է «Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դարերում» թեկնածուականատենախոսությունը՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1973 թվականին այն հրատարակվում է առանձին գրքով:

1981 թվականին լույս է տեսնում «Սյունիքը Օրբելյանների օրոք» մենագրությունը, ուր ամփոփված են Սյունիքի քաղաքական-տնտեսական կյանքն ու կրթամշակութային օջախների համառոտ նկարագիրը:

Գր. Գրիգորյանի դոկտորական ատենախոսությունը դարձյալ Սյունիքին էր նվիրված: 1985 թ «Սյունիքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմությունը 13-15 դդ.» ատենախոսության համար Գր. Գրիգորյանին շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1993 թվականին Գր. Գրիգորյանը ստանում է պրոֆեսորի կոչում:

1990 թվականին Երևանում հրատարակվում է «Очерки истории Сюника 9-15 вв.» մենագրությունը:

2004 թվականին Մոսկվայում լույս տեսավ «Род Орбелянов и история Сюника 9-15 вв.» գիրքը, Օրբելյան իշխանների մերօրյա շառավիղ, Առևտրի համաշխարհային խորհրդի (Սան Ֆրանցիսկո) նախագահ Գարի Աղապարտի Օրբելյանի հորդորով և մեկենասությամբ: Այն լայն արձագանք գտավ ռուսաստանյան գիտական շրջանակներում:

Իր ապրած տարիների ու վաստակի մեջ հայագետն իր համար ճակատագրական է համարում 1966 թվականի գարունը, երբ առաջին անգամ ոտք դրեց Սյունիք: Ծանոթանալով գիտնականի կյանքին ու կենսագրությանը՝ տեսնում ենք, որ նրա աշխատությունների մեծ մասը նվիրված է հենց Սյունիքին:

Սյունյաց աշխարհի նկատմամբ ունեցած նրա նախասիրությունների արգասիքն էր 60-ական թվականներին ձեռնարկած Վահանավանքի միջնադարյան պատմաճարտարապետական համալիրի պեղումները: Հայտնաբերվեցին ուշագրավ հնագիտական նյութեր, արժեքավոր հուշակոթողներ, բազմաթիվ վիմական արձանագրություններ, որոնք կարևոր նշանակություն ունեցան Բաղաց թագավորության և Սյունյաց հոգևոր աթոռի պատմության նորովի շարադրան-

քի համար: «Սյունիքով սկսվեց իմ մուտքը գիտական աշխարհ և Սյունիքով էլ ավարտվեց, ես ավերակների տակից վեր հանեցի Վահանավանքը և տվեցի եկող սերունդներին», — ասում է Գր. Գրիգորյանը:

Վահանավանքի պատմահնագիտական ուսումնասիրությունները, այդ տարիների քրտնաջան աշխատանքի հուշերը 2007 թվականին ամփոփվեցին «Վահանավանք» գրքում (երկեզու՝ հայերեն և ռուսերեն): Այս թեմատիկային է վերաբերում նաև 2009 թվականին, լույս տեսած «Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից)» էսսեն, ուր ամփոփված են պեղման աշխատանքները, հիշարժան դեպքերն ու դեմքերը:

1960–ական թվականների վերջերին ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի որոշմամբ կազմվում է վիմագրական արշավախումբ. նպատակը՝ հավաքել Խորհրդային Միության տարածքում եղած հայկական գաղթօջախների վիմագրերը և դրանք հրատարակել գիտական հիմունքներով: Հայ-ուկրաինական և հայ-ռուսական միացյալ արշավախմբերը Գր. Գրիգորյանի գլխավորությամբ ուսումնասիրում են Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի տարածքում գտնվող ավելի քան 1500 վիմագրեր, ինչպես նաև թանգարանային իրերի հայերեն մակագրություններ: Աշխատանքների արդյունքում 1996 թվականին հրատարակվում են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 7-րդ, իսկ 1999 թվականին 8-րդ պրակները, որոնք ընդգրկում էին համապատասխանաբար Ուկրաինայի, Մոլդովայի և Ռուսաստանի Դաշնության հայկական հուշարձանների վիմական արձանագրությունները: Այս հատորներում հայերենից զատ տեղ են գտել նաև զգալի թվով ռուսերեն, լեհերեն, գերմաներեն, լատիներեն, հայատառ-դիպաղերեն արձանագրություններ, որոնք ներկայացված են բնագրերով և հայերեն թարգմանություններով:

Գր. Գրիգորյանը կազմել է Կապանի և Եղեգնաձորի շրջանների երկրագիտական թանգարանների էքսպոզիցիոն պլանները: Գիտնականը ռուսերեն է թարգմանել բազմաթիվ զրաբարյան վիմական բնագրեր: Նրան է պատկանում Թեոդոսիայի Սուրբ Սարգիս եկեղեցու սրահներում բացված հայկական քարեդարանի արձանագրությունների բնագրերի ռուսերեն թարգմանությունը: Կրեմլի Զինապալատի թանգարանային բաժնի վարիչ Մ. Պոստնիկովայի խնդրանքով Գր.

Գրիգորյանն ուսումնասիրել է վրացական ֆոնդը և պարզել, որ այն-
տեղ պահվող իրերի մեծ մասն ունեն հայերեն արձանագրություններ,
ինչի արդյունքում էլ երբեմնի վրացական ֆոնդը վերանվանվել է հայ-
կական:

2000 թվականին լույս է տեսնում վաստակաշատ գիտնականի ու
մանկավարժի «Հայկական վիմագրություն» համառոտ ձեռնարկը՝
բուհերի պատմության և բանասիրության ֆակուլտետների ուսանող-
ների համար՝ իր տեսակով առաջինը հայ իրականության մեջ:

Հաջորդ բուհական ձեռնարկը՝ «Սյունիքի պատմություն» վերնա-
գրով (Գորիսի պետական համալսարանի դասախոս Սերգեյ Հախ-
վերդյանի համահեղինակությամբ), լույս է տեսնում 2001 թվականին:

Արցախյան պատերազմի օրերին Գր. Գրիգորյանը Արցախին հու-
զող խնդիրներով նամակներ և հեռագրեր է ուղղել Խոբրդային Միու-
թյան ղեկավարությանն ու բարձրաստիճան անձանց: Հետագայում
2005 թվականին, նամականին լույս տեսավ «Ղարաբաղյան օրագիր
(1988–1992 թթ)» գրքում:

Գիտական գործունեությանը զուգահեռ՝ հինգ տասնամյակից
ավելի Գր. Գրիգորյանը զբաղվել է նաև մանկավարժությամբ. 1973
թվականից դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան համալսա-
րանում, Երևանի պետական համալսարանում, Հր. Աճառյանի անվան
համալսարանում, ինչպես նաև պոլիտեխնիկական համալսարանի
ճարտարապետության բաժնում:

Գրիգորյանը զեկուցումներով հանդես է եկել Մոսկվայի, Լենին-
գրադի, Ղրիմի գիտաժողովներում: Լինելով Կապանի պատվավոր
քաղաքացի՝ զեկուցումներ է կարդացել Սյունիքի տարածաշրջանի
դպրոցներում, զորամասերում: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների:
Մեծ է պրոֆեսորի ներդրումը երիտասարդ կադրերին սատարելու
գործում: Նրանցից շատերն այսօր դարձել են գիտությունների թեկ-
նածուներ, դոկտորներ: Մինչ օրս Գր. Գրիգորյանը ՀՀ ԳԱԱ Հնագի-
տության և ազգագրության ինստիտուտում գիտական աստիճաններ
շնորհող խորհրդի անդամ է: Պրոֆեսորին նվիրված բազմաթիվ հոդ-
վածներում նրան անվանում են «Սյունիքի նվիրյալ գիտնական»,
«Հայոց վիմագրերի նորօրյա տարեգիր»: Գր. Գրիգորյանը հավաքում
և վերծանում է պատմական Սյունիքի պրակից ինչ-ինչ պատճառներով

դուրս մնացած վիմագրերը՝ հետագայում դրանք լրացուցիչ հատորով հրատարակելու համար:

Նվիրյալ գիտնականն արժանացել է մի շարք պարգևների. 1988 թ. մայիսի 12-ին ԳԱԱ նախագահության կողմից պարգևատրվել է Գովեստագրով, 2003 թվականին՝ Պատվոգրով, 2005 թվականին՝ Վաստակագրով, 2010 թվականի մայիսի 24-ին, Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նրան շնորհվել է «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում:

Գ. Սարգսյան, Ս. Խորշոդյան

ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

- Ծնվել է 1930 թ. մարտի 2-ին Վլադիկավկազում:**
- 1937 թ. ընտանիքով տեղափոխվել են Երևան:**
- 1947–1949 թթ. սովորել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում:**
- 1950–1954 թթ. սովորել և ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետը:**
- 1954–1956 թթ. աշխատել է Եղեգնաձորի շրջանի Հորս գյուղում, որպես դպրոցի տնօրեն:**
- 1956–1960 թթ. աշխատել է Հայպետհրատում՝ որպես ավագ սրբագրիչ:**
- 1962 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում:**
- 1986–2010 թթ. նույն ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ:**
- 1960–1996 թթ. Հայ-ուկրաինական և հայ-ռուսական միացյալ արշավախմբերի ղեկավար:**
- 1966 թ.-ից Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար:**
- 1967 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:**
- 1985 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:**
- 1993 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:**
- 1973–2010 թթ. դասավանդել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում:**
- 2003–2010 թթ. դասավանդել է Հր. Աճառյանի անվան համալսարանում:**
- 1973–2016 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում:**
- 1975 թ. դասավանդել է պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժնում՝ ուսուցանելով գրաբար և վիմագրություն:**
- 1980 թվականից մինչ այսօր ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ է:**

ԱՃԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

ԳՐԲԵՐ

1. *ՄՅՈՒՆԻՔԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱԼՎԱԾԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ*

9-13-ԲԴ ԴԴ-ՈՒՄ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973, 268 էջ:

Մենագրությունը նվիրված է Սյունյաց նահանգի վանական խոշոր միաբանությունների վարչա-տնտեսական գործունեության համակողմանի քննությանը: Մատենագրական և վիմագրական աղբյուրների հիման վրա բացահայտվում է վանքերի ու վանական միաբանությունների առաջացման սոցիալ-քաղաքական պատճառները, վանքերի ապահարկության խնդիրները, վանական տնտեսության ճյուղերը, ինչպես նաև վանքերի հասարակական, գիտա-կրթական դերը:

2. *ՄՅՈՒՆԻՔԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ (13-15 դդ.),*

ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, 318 էջ:

Քննարկվում է Սյունիքի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների և թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում: Ներկայացված է Սյունիքում Օրբելյանների հաստատման, գերիշխանության հասնելու պատմությունը: Համառոտ տրված է Սյունիքի կրթամշակութային օջախների նկարագիրը:

3. *ОЧЕРКИ ИСТОРИИ СЮНИКА 9-15 ВВ.,*

АН АРМ. ССР, Ереван, 1990, 390 с.

Մենագրության մեջ ներկայացված է Հայաստանի Սյունյաց նահանգի համապարփակ պատմությունը՝ զարգացած ավատատիրության դարաշրջանում: Աշխատության էջերում քննության առարկա են դարձել Սյունիքի ֆեոդալական տները, թագավորության ժամանակաշրջանի քաղաքական անցքերը, հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարը, Օրբելյանների հաստատման և քաղաքական թափառումից հեռանալու հարցերը:

**4. ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ, 7-րդ պրակ
(Ուկրաինայի և Մոլդովայի հայկական վիմագրերը),
ՀՀ ԳԱԱ հրատ. Երևան, 1996, 410 էջ:**

Դիվան հայ վիմագրության 7-րդ պրակում ամփոփված են Ուկրաինայի և Մոլդովայի տարածքներում գտնվող հայկական նախկին գաղթօջախների վիմական արձանագրությունները, որոնք հավաստի տեղեկություններ են պարունակում այդ տարածաշրջաններում ապրած հայ ազգաբնակչության քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքի վերաբերյալ: Մեծարժեք են ներկայացնում հատկապես Կիևի, Դրիմի, Լվովի, Օդեսայի, Քիշնևի և այլ բնակավայրերի վիմական արձանագրությունները: Դրանց մեծ մասը գիտական շրջանառության մեջ դրվեց առաջին անգամ:

**5. ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ, 8-րդ պրակ
(Ռուսաստանի Դաշնության հայկական վիմագրերը),
ՀՀ ԳԱԱ հրատ. Երևան, 1999, 315 էջ:**

Դիվան հայ վիմագրության 8-րդ պրակում տեղ են գտել Ռուսաստանի Դաշնության տարածքում գտնվող հայկական գաղթավայրերի հայերեն, ինչպես նաև ռուսերեն և այլալեզու վիմագրերն ու թանգարանային իրերի մակագրությունները: Կարևորվում են Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Կազանի, Հյուսիսային Կովկասի վիմական բնագրերը, որոնք առնչվում են հայերին և Հայաստանին:

**6. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ (Համառոտ ձեռնարկ
բուհերի պատմության և բանասիրության ֆակուլտետների
համար), ՀՀ ԳԱԱ, Երևան, 2000, 207 էջ:**

«Հայկական վիմագրություն» ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի պատմության, բանասիրության բաժիններում սովորող ուսանողների, ինչպես նաև հայագիտությամբ զբաղվող մասնագետների համար: Ձեռնարկում ներկայացված են վիմագրության զարգացման փուլերը, վիմագրերի ընդօրինակման, վերծանության եղանակները: Հակիրճ ներկայացված է որոշ պատմիչների, տեղագիրների և գիտնականների վիմագրագիտական գործունեությունը:

7. ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (Բուհական համառոտ դասընթաց՝ Սերգեյ Հախվերդյանի համահեղինակությամբ), ՀՀ ԳԱԱ, Երևան, 2001, 316 էջ:

Զեռնարկը նվիրված է Սյունիքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի լուսաբանմանը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր: Մատենագրական աղբյուրների և վիմական արձանագրությունների միջոցով ուսումնասիրվում է 12–13-րդ դարերում միջավատական հարաբերությունները Սյունիքում, ուր քաղաքական հանգամանքների բերումով, կենտրոնացվել էին պատմական Հայաստանի հին ու նոր ազնվական տների ներկայացուցիչներից շատերը՝ Զաքարյանների ընդհանուր ղեկավարությամբ (Խաղբակյաններ, Օրբելյաններ, Մեհկանյաններ և այլք): Նախատեսված է բուհերի պատմության ֆակուլտետի ուսանողության համար:

8. РОД ОРБЕЛЯНОВ И ИСТОРИЯ СЮНИКА В 9–15ВВ,
Москва, (изд. Культурная Революция), 2004, 328 с.

Աշխատության մեջ բազմաթիվ սկզբնաղբյուրների վերլուծությամբ ներկայացված է Սյունյաց նահանգի սոցիալ-քաղաքական հարաբերությունների և մշակութային կյանքի պատմությունը՝ ավատատիրության դարաշրջանում: Ուսումնասիրությունները և փաստագրական հարուստ նյութերը հնարավորություն են ընձեռնում եզրակացնելու, որ Սյունյաց թագավորության կործանման, Օրբելյանների իշխանապետության վերացման համար հող նախապատրաստեցին երկրի քաղաքական մասնատվածությունը, օտար նվաճողների ներխուժումները, Հայաստանի ավատական տների միջև եղած հակամարտությունները:

9. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՕՐԱԳԻՐ (1988–1992 թթ.)
հայերեն և ռուսերեն, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2005, 176 էջ:

Գիրքը ներառում է արցախյան ազատամարտին առնչվող նամակներ ու հեռագրեր, որոնք հասցեագրված են Խորհրդային Միության ղեկավարներին, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության բարձրաստիճան աշխատակիցներին, Գերագույն խորհրդի պատգամավորներին, կենտրոնական մամուլի և հեռուստատեսության պատասխա-

նատուներին: Նամակներն ու հեռագրերը տրվում են ոռոսերեն բնագրով՝ հայերեն թարգմանությամբ: Ներկայացվում են նաև մի շարք պաշտոնական անձանց պատասխանները աշխատության հեղինակին:

10. ՎԱՀԱՆԱՎԱՆՔ (հայերեն և ոռոսերեն),

ՀՀ ԳԱԱ, Երևան, 2007, 250 էջ:

Գիրքը պատմա-հնագիտական ուսումնասիրություն է՝ նվիրված Հայաստանի միջնադարյան ճարտարապետության Սյունիքի հուշարձանախմբերից մեկի՝ Վահանավանքի քառասնամյա պեղումների արդյունքների ամփոփմանը և նորահայտ վիմագրերի վերծանությանը: Մենագրության մեջ ներկայացվում են Սյունիքի թագավորների, թագուհիների, իշխանների, զորապետների և հոգևորականության ներկայացուցիչների հուշակոթողների վիմագրերը և դրանց վերծանությունները:

11. ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

(Հնագետի օրագրից, հայերեն և ոռոսերեն), ՀՀ ԳԱԱ, Երևան, 2009, 192 էջ, 32 աղյուսակ, 83 լուսանկար, 37 գրչագիր:

Գրքում տեղ են գտել հնագետի օրագրում գրառված հուշերն ու Վահանավանքի 40-ամյա պեղումների ընթացքում տեղի ունեցած հիշարժան դեպքերը: Դրանք անմոռանալի պատմություններ են, որոնք համեմված են Սյունիքի բարբառով:

ՅՈՂՎԱԾՆԵՐ

1963

1. Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին, ՊԲՀ, 1963, № 2, էջ 260–263:

Հոդվածում քննության է առնված միջնադարյան «մահկանե» կոչվող տուրքի տեսակը: «Մահկանե», իբրև տուրքի տեսակ հայագետներն առաջին անգամ դիտել են Բջնիի 1325թ. գրված մի արձանագրության մեջ: Գառնիի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի

ձախ պատին՝ 1315 թ մի արձանագրության մեջ հիշատակվում է «զջադացի մահկանան» արտահայտությունը: Վիմական արձանագրություններից պարզ է դառնում, որ «մահկանան» մի տուրք էր, որը գանձվում էր ջրադացից՝ ֆեոդալ տերերի օգտին: Մահկան է բառը կազմված է պահլավերեն «մահ»-լուսին, ամիս արմատից, «կան է» ածանցից և արտահայտել է ամսական վարձ իմաստը:

1965

2. Ն. Մառի ծննդյան 100-ամյակը, ԳԱ «Տեղեկագիր», 1965, №1, էջ 99-100:

Գիտական լրատուն անդրադարձել է 1964թ-ին կայացած հոբելյանական գիտական նստաշրջանին, որը նվիրված էր մեծ հայագետ Նիկողայոս Մառի ծննդյան հարյուրամյակին: Գիտական նստաշրջանում իրենց զեկուցումներով հանդես եկան Բ. Առաքելյանը (Ն. Մառի Անիում կատարած հնագիտական պեղումները), Ա. Ղանալանյանը (Ն. Յա. Մառը և հայ բանահյուսությունը), Ս. Բարխուդարյանը (Հայկական վիմագրությունը Ն. Մառի գնահատմամբ), Պ. Մուրադյանը (Ն. Մառը և հայ-վրացական բանասիրությունը) և այլք: Իրենց ելույթներով նրանք բնութագրեցին այն շնորհակալ աշխատանքը, որն անխնայ կերպով կատարել էր Նիկողայոս Մառը:

1966

3. Դրամական հարաբերությունների զարգացումը Սյունիքում և Ստեփանոս Օրբելյանի «Հարկացուցակի» խնդիրը, ՀՍՍՀ, ԳԱ, ԼՀԳ, 1966, №2, էջ 45-58:

Հոդվածում լուսաբանվում են 9-13-րդ դդ. Մեծ ծավալ ստացած դրամական շրջանառության, մասնավորապես արծաթյա դրամի կիրառման, ինչպես նաև վանական կալվածատիրության մեջ դրամական ռենտայի հետ կապված մի շարք հարցեր: Գրիգորյանը հատուկ անդրադառնալով Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակին՝ եզրահանգում է, որ վանքերն ու եկեղեցիները հարկերն ու տուրքերը նախընտրում էին վերցնել կանխիկ դրամով, քանի որ վանքին պատկանող տնտեսություններում կիրառվում էր դրամական ռենտան:

4. Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը, ՊԲՀ, 1966, № 4, էջ 233-240:

Պատմահնագիտական հետազոտությունների հիման վրա փորձ է արվում լուսաբանել հին Հայաստանի խոշորագույն նահանգներից մեկի՝ Սյունիքի մի շարք բնակավայրերի տեղադրությունը: Այդ բնակավայրերը՝ Ագատի, Արիտ, Խանք, Ծածարդ, Կիցք, Կորովի, Դեղնաձոր և այլն, հիշատակված են 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Հարկացուցակ»-ում:

1970

5. Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, ՀՍՍՀ ԳԱ, ԼՀԳ, 1970, № 10, էջ 81-94:

Հոդվածում ներկայացվում են Վահանավանքի պեղման նախնական արդյունքները: Հեղինակը քննության առարկա է դարձրել հինգ տարիների պեղումների ընթացքում հայտնաբերված պատմահնագիտական կարևոր արժեք ներկայացնող նյութեր և վիմագիր արձանագրություններ, որոնք առաջին անգամ էին դրվում գիտական շրջանառության մեջ: Հոդվածում ուսումնասիրվում են ճարտարապետական մանրամասներ, հնագիտական նյութեր, խեցեղեն, որոնք թվագրված են 10-15-րդ դդ.-ով:

6. Новые данные обармянских эпиграфических надписях Крымаи Северного Кавказа, ИФЖ, 1970, № 3, ст. 297-301.

Դիվան հայ վիմագրության մատենաշարի 7-րդ պրակը կազմելու համար Ղրիմ գործուղված մի խումբ վիմագրագետներ վիմական արձանագրություններ հավաքեցին Սիմֆերոպոլի, Եվպատորիայի, Յալթայի տարածքներից: Նորահայտ վիմական արձանագրությունները թվագրված էին 14-18-րդ դարերով: Դրանք շինարարական բնույթի արձանագրություններ էին, որոնց վկայամար հայերը Ղրիմում կառուցել են վանքեր և եկեղեցիներ, որոնցից քառասունհինգը՝ Թեոդոսիայում, որտեղ 1439 թվականին ապրում էին մոտ 30.000 հայեր: Ղրիմում և Հյուսիսային Կովկասում հայտնաբերված վիմական արձանագրությունները մեծ և հավաստի տեղեկություններ տվեցին հայերի մասին:

1972

7. Новонайденные надписи Ваанаванка, ИФЖ, 1972, №1, ст. 215–229.

Վահանավանքի պեղումների ժամանակ հայտնաբերված վիմական արձանագրությունների ուսումնասիրությունները հաստատեցին Ստ. Օրբելյանի վկայությունն այն մասին, որ Վահանավանքը եղել է Սյունյաց և Աղվանից թագավորական-իշխանական տոհմերի դամբարանատունը: 1046թ. փորագրված արձանագրության հիման վրա հակիրճ քննության են առնվում Սյունիքի թագավորներ Սմբատ երկրորդի և Գրիգոր առաջինի շինարարական գործունեությունը, Խաղբակ Ռոզվազի, Մեհևանյան իշխանների, Հասանի և այլոց տոհմագրությունը:

1976

8. Ստեփանոս Օրբելյան , ՊԲՀ, 1976, №4, էջ 155–164:

Հոդվածը նվիրված է միջնադարի ականավոր պատմիչ, քաղաքական և կրոնական գործիչ Ստ. Օրբելյանին: Ներկայացված են Օրբելյան պատմիչի կյանքը, գործունեությունը, գրական հարուստ ժառանգությունը, մեզ հասած աշխատությունները: Հակիրճ նկարագրվում են Սյունյաց նահանգի ուսումնական հաստատությունները, որոնք մեծ ծաղկում ապրեցին Օրբելյանի առաջնորդության տարիներին:

9. Բաղաբերդ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, 1976, էջ 248–249 (Գր. Գրիգորյան և Մ. Հասրաթյան):

Համառոտ պատմական նկարագիր է տրվում Հայաստանի խոշորագույն պաշտպանական կառույցներից մեկի՝ Բաղաբերդի մասին:

10. Արմյանսկ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ.2, 1976, էջ 97:

Համառոտ տրվում է Արմյանսկ քաղաքի պատմական նկարագիրը (քաղաք Ուկրաինական ՍՍՀ Ղրիմի մարզում): Ակնարկում նշվում է, որ այն, որպես բնակավայր, 1330-ական թվականներին հիմնել են Ղրիմ գաղթած մի քանի հայ ընտանիքներ: Երկրորդ համաշխարհային

պատերազմի ժամանակ ոմբակոծությունից ավերվել են քաղաքը, հին շինությունները, այդ թվում հայկական եկեղեցին:

1979

11. Армянские надписи Киевского собора Св. Софии, АН, Арм. ССР, ВОН, 1979, № 4, ст. 84–93.

Հռոկածում արժևորվում են Կիևի ս. Սոֆիա հուշարձանախմբի վերականգնման աշխատանքների ընթացքում հայտնաբերված Գ. Լուսավորչի և ս. Հռիփսիմեի որմնանկարները, ինչպես նաև 24 հայերեն արձանագրություններ, որոնք ունեն հիշատակագրային բովանդակություն և թվագրված են 16–17-րդ դարերով: Այսպիսով, գիտական շրջանառության մեջ դրվեցին ս. Սոֆիայի մայր տաճարի հայատառ արձանագրությունները, որոնք ունեն պատմագիտական կարևոր արժեք և նպաստում են հայ-ուկրաինական դարավոր կապերի ուսումնասիրությանը:

1980

12. Վիմագրություններ Վահանավանքի 1970–1978 թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, № 2, էջ 154–165:

Վահանավանքը 10–11 դդ. Եղել է ոչ միայն հոգևոր և կրթական կենտրոն, այլև Սյունյաց գահակալների տոհմական դամբարանատուն: Հռոկածում գետեղված են մեծ տաճարի, սյունասրահի և սեղանատան մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերված արձանագրություններ, ինչպես նաև Վահան Նախաշինողի, իշխանաց իշխան Աշոտի, Ջևանշիրի և շատ այլ իշխանագուհիների տապանաքարեր:

1982

13. Մոսկվայի Կրեմլի գինապալատի հայերեն արձանագրությունները, ԳԱ, ԼՀԳ, 1982, № 8, էջ 80–88:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրական արշավախումբը 1976թ. Հավաքչական աշխատանքներ էր

ծավալել Ռուսաստանի հայկական գաղթօջախների տարածքում: Հոդվածում հանգամանոր են տրվում են Զինապալատի արձանագրություններն իրենց գրչագրերով, որոնք, կարևոր արժեք են ներկայացնում հայ և ռուս ժողովուրդների կապերն ուսումնասիրելու տեսակետից: Ներկայացված վիմական արձանագրությունները թվագրված են 17-18-րդ-ով: Դրանք բնույթով հիշատակագրային արձանագրություններ են՝ հայկական գաղթօջախների մասին տեղեկություններով:

1983

14. Վիմագրական նոր տեղեկություններ 18-19-րդ դդ. հայ-ռուսական հարաբերությունների մասին (ըստ *Լենինգրադի և Մոսկվայի նյութերի*), ԳԱ, ԼՀԳ, 1983, № 8, էջ 45-61:

Հավաքական աշխատանքներ Ռուսաստանի, Ուկրաինայի հայկական գաղթօջախներում: Հոդվածում քննարկվում է «Դիվան հայ վիմագրության» 7-րդ և 8-րդ պրակների համար հավաքած նյութերի կարևորությունը, որոնք արժեքավոր վկայություններ են պարունակում այդ վայրերի հոգևոր, մշակութային և քաղաքական անցուղարձի մասին: Մեջբերված արձանագրություններում հիշատակվում են հայազգի ականավոր գործիչներ (գլխավորականներ, հոգևորականներ, ուսուցչապետեր), ովքեր մեծ դեր են խաղացել հայ, ռուս, ուկրաինացի և մոլդովացի ժողովուրդների դարավոր կապերի հաստատման գործում:

1988

15. Օրբելյաններ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ.2, 1988թ, էջ 586-587:

Հայկական Սովետական հանրագիտարանում տեղ գտած այս հոդվածը նվիրված է Օրբելյանների իշխանական տոհմին: Հանգամանորեն տրվում է իշխանական տոհմի ծագումը պատմական միշարք փաստերի հիման վրա:

1990

16. *Историографическое значение армянских лапидарных надписей Арцаха и Сюника, АН, ВОН, 1990, № 1, ст 3–11.*

Հոդվածում ներկայացված Արցախի և Սյունիքի նահանգների հայկական վիմական արձանագրությունները պարունակում են հավաստի տեղեկություններ անդրկովկասյան ժողովուրդների անցյալի պատմության մասին: Վիմագրական հարուստ նյութերը թույլ են տալիս մերժել այն տեսակետը, ըստ որի՝ Արցախում, Սյունիքում և հարակից շրջաններում իբրև թե ապրել են «կովկասյան աղվաններ», որոնք հայացել են 12-րդ դարի սկզբին: Արցախում և Սյունիքում ապրել և ապրում են տեղաբնակ հայեր՝ իրենց միասնական լեզվով, կենցաղով և սովորույթներով: Հետևաբար, իզուր են հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրելու ջանքերը:

1997

17. *Գրախոսություն .Կիրակոսյան Գ.Ե., «Հայաստանը Լենկ-Թեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում», ԳԱԱ, ԼՀԳ, 1997, № 2, էջ 188–190:*

Գրախոսությունը վերաբերում է Գ.Ե. Կիրակոսյանի «Հայաստանը Լենկ-Թեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում» գրքին: Գրիզդրյանը նշում է, որ աշխատանքը շարադրված է գեղեցիկ հայերենով, գիտական բարձր մակարդակով, ունի արդիական հնչեղություն: Կիրակոսյանն այս գրքով նպատակ է հետապնդել լուսաբանել հայ ժողովրդի ողբով լեցուն մի ժամանակահատվածի իրական պատմություն: Օգտագործված բազմաթիվ սկզբնաղբյուրների մեջ կրկին իրենց ուրույն տեղն են գտել վիմական արձանագրությունները:

1998

18. *Հովսեփ Օրբելու վիմագրագիտական վաստակը «Հայագիտական հանդես», 1998, № 1, էջ 75–79 :*

Հոդվածում Հովսեփ Օրբելին ներկայացվում է որպես վիմագրագիտական դպրոցի հիմնադիր, ով բարձր էր գնահատում հայերեն վի-

մագրերի պատմագիտական արժեքը և կարծում էր, որ եթե ջնջվեն մեր քարակերտ մատյանները, կկորցնենք մեր ժողովրդի անցյալի պատմությունը և հայ ժողովրդի դիմագիծը:

**19. Հայ մշակույթի ականավոր գործիչները
(Մ. Պետերբուրգի Սմոլենսկյան հայկական գերեզմանոց)
«Հայագիտական հանդես», 1998, №1, էջ 71–75:**

Հոգվածում խոսվում է հայոց դպրության և մշակույթի երկու երախտավորների՝ Գրիգոր Խալդարյանի և Մարիամ Սարաֆյանի մասին, ովքեր հանգչում են Սմոլենսկյան հայկական գերեզմանատանը: Գր. Խալդարյանի կյանքին և գործունեությանը կարելի է ծանոթանալ նրա տապանաքարին փորագրված 54 տողանոց բանաստեղծությունից: Հոգվածում նշվում է Խալդարյանի հրատարակած գրքերի՝ «Այբբենարան»-ի և «Գիրք, որ կոչի շաւիղ լեզւագիտութեան» քառարանի մասին:

Ինչպես վերը նշեցինք, նույն գերեզմանոցում է հանգչում Մ. Սարաֆյանը, ով գրականության մեջ հայտնի է Կլետպատրա անունով: Նրա կենսագրական տվյալները ևս փորագրված են տապանագրում 26-ական տող՝ հայերեն և ռուսերեն: Ուսումնասիրություններով ընդգծվում է վիմական արձանագրությունների կարևորությունը հայ ժողովրդի համար: Այդ արձանագրությունները վկայում են մեր պատմության շատ կարևոր դեպքերի և դեմքերի մասին:

1999

**20. Սյունյաց եպիսկոպոսների շինարարական
գործունեությունը 9–14-րդ դդ., ՊԲՀ, 1999, №2–3, էջ 166–174:**

Տեղեկություններ են տրվում Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեության մասին: 9–14-րդ դարերում Հայաստանը, հատկապես Սյունյաց լեռնաշխարհը, վերածվել էր շինարարական լայն հրապարակի, որի կազմակերպիչները նահանգների ու գավառների աշխարհիկ և հոգևոր տերերն էին: Շինարարական աշխատանքներն ընդհատվեցին 15–16 դարերում քաղաքական ծանր պայմանների պատճառով: Մեր իշխաններն ու հոգևորականները գտնում էին, որ երկիրը կարելի է շինացնել այն դեպքում, երբ «բանքն սպառին և գործքն թազատրեն» (տես «Դիվան» 3, էջ 216)

«Քրիստոնյա Հայաստան», (Երևան 2002)
հանրագիտարանում տպագրվել են .

21. Սյունիքի մետրոպոլիտություն (էջ 914–915) :

Քրիստոնյա Հայաստան հանրագիտարանում տեղգ տաձ այս հոդ-վաձն իր մեջ ամփոփում է հայ եկեղեցու միակ՝ Սյունյաց մետրոպոլի-տության ամփոփ պատմությունը: Ենթադրվում է, որ այն ստեղծվել է 10-րդ դարում՝ կապվաձ Սյունյաց գահերեց իշխանների, Սյունյաց եպիսկոպոսական աթոռի հզորացման, անկախության ձգտումներիև Սյունյաց անկախ թագավորության հռչակման հետ (987թ.):

22. Հերմոնի վանք (էջ 583–584) :

Համառոտ ներկայացվում է 936 դարերում թ-ին Սյունյաց գահերեց իշխան Սմբատի և Տեր-Հակոբ եպիսկոպոսի հիմնադրաձ վանքի՝ Հեր-մոնի (Ահերմոնի) պատմությունը: Նկարագրվում են վանքի գրչության կենտրոնը, դպրոցը, որը գործել է շուրջ 100 տարի:

23. Վահանավանք (էջ 950–951) :

Պատմական նկարագիր է տրվում Սյունյաց նահանգի Բաղք գա-վառի գահակալ իշխան Զագիկի որդի Վահանի հիմնադրաձ վանքի՝ Վահանավանքի և վանական դպրոցի վերաբերյալ:

24. Վահան կաթողիկոս Սյունեցի (էջ 949) :

Հոդվաձը նվիրվաձ է Սյունյաց նահանգի Բաղք գավառի գահակալ իշխան Զևանշիրի որդի Վահան Սյունեցու կյանքին ու գործունեությանը:

25. Սպիտակավոր Աստվաձաձնի վանք (էջ 919–920) :

Հոդվաձը նվիրվաձ է ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղից 7 դարերում կմ հյուսիս գտնվող Սպիտակավոր վանքին, որը հիմնադրել է Էաչի Պողոյան իշխանը: Նկարագրվում են եկեղեցու ինքնատիպ հո-րինվաձքը, գրչության կենտրոնը:

2005

26. Ականավոր վիմագրագետը՝ Սեդրակ Բարխուդարյան, ԼՀԳ, 2005, №3, էջ 188–193:

Հոդվածը նվիրված է ականավոր վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանին: Գր. Գրիգորյանն անդրադառնում է մեծ վիմագրագետի կյանքին և գործունեությանը: Երախտագիտությամբ փաստում է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի սկզբնավորող և հիմնադիր, հայագիտության նվիրյալ Սեդրակ Բարխուդարյանի դերը, նրա վիմագրագիտական մեծ և մնայուն վաստակը:

2006

27. Սյունիքի թագավորությունը, ՊԲՀ, 2006, №2, էջ 134–145:

Հոդվածում քննության առարկա է դարձել Սյունիքի ավատական թագավորությունը, որը գոյատևել է շուրջ 200 տարի: Վիմագրական և մատենագրական սկզբնաղբյուրների համադրությամբ կազմել է Սյունյաց արքաների գահացանկը և նրանց գահակալության տարիները:

1. Սմբատ Ա, որդի Սահակի – 970(987)–998
2. Վասակ՝ որդի Սմբատ Ա-ի – 998–1040
3. Սմբատ Բ, որդի Աշոտի – 1040–1051
4. Գրիգոր Ա, որդի Աշոտի – 1051–1072
5. Սենեքերիմ, որդի Սևադայի – 1072–1094(1096)
6. Գրիգոր Բ, որդի Սենեքերիմի – 1096–1166

Ամփոփելով նշվում է, որ Սյունիքի, ինչպես նաև ավատական այլ փոքրիկ թագավորությունների հանդես գալը պառակտում է միասնական պետության հիմքերը և թուլացնում նրա տնտեսական և պաշտպանական համակարգը:

2008

28. Ա. Արրահամյանի տեղագրական շտկումները, «Հայագիտական հանդես» 2008, № 2–3, էջ 45–48 :

Հոդվածը նվիրված է Աշ. Արրահամյանի կատարած թարգմանություններից մեկի՝ Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» երկի թարգմանությանը: Աշ. Արրահամյանն անդրադարձել է Ստ. Օրբելյանի մոտ հիշատակված բառ-եզրույթների, հատկապես տեղանունների ստուգաբանությանը:

2012

29. Հայկական վիմական արձանագրությունների պատմագիտական արժեքը, ԼՀԳ, 2012, № 2–3, էջ 79–85:

Քննարկվում է վիմական արձանագրությունների պատմագիտական արժեքը: Հեղինակի դիտարկմամբ յուրաքանչյուր վիմական արձանագրություն պատմական կարևոր սկզբնաղբյուր է, ատանց որի հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել Հայաստանի պատմական անցյալի մասին: Հայագետը հորդորում է հետևել Խորենացուն, Եղիշեին, Օրբելյանին խնամքով հավաքել մեր բանավոր և գրավոր մատյանների պատմությունները, փրկել այդ սրբազան մատուցները և փոխանցել հետագա սերունդներին: Ինչպես Ղ. Ալիշանն է ասել. «հայոց վիմագրերն անխաբ հայելիք են հանճարոյ և ոգոյն նախնեաց մերոց»:

ԹԵՐԹԵՐՈՒՄ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՏՊԱԳՐԱԾ ՀՈՂՎԱՃՆԵՐ

1. Թող մեղիորատորները որոշեն Վարարակնի ջրանցքը վերականգնելու մասին, «Սովետական Հայաստան» թերթ, 19.06. 1966, №142 (13796), էջ 1:
2. Փստրվում է դիցուիս արձանը, «Պիոներ կանչ» թերթ, 4.01.1967, №2 (3016), էջ 3:
3. Վահանավանքը բացում է իր գաղտնիքները, «Պղնձի համար» թերթ, 5.12.1968, №109, էջ 4:
4. Мемориальные плиты (новые лапидарные надписи об И. К. Айвазовском), газета «Коммунист» , 24.11.1968, №63, ст 4 .
5. Նորահայտ արձանագրություններ Ղրիմից, «Սովետական արվեստ» ամսագիր, 1969, №12, էջ 5-7:
6. Ղրիմի և Հյուսիսային Կովկասի հայկական արձանագրությունները, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1969, №12, էջ 2-3:
7. Ղրիմի և Հյուսիսային Կովկասի վիմական արձանագրությունները, «Պայքար» թերթ, Բոստոն, 7.05.1970, №116, էջ 2-3:
8. Վահանավանք, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1971, №8, էջ 37-38:
9. Հայկական Պոմպեյի ավերակները, «Երեկոյան Երևան» թերթ, 29.07.1971, №173, էջ 3-4:
10. Հեռավոր հուշարձանները ուշադրության կենտրոնում, «Բնություն» ամսագիր, 1971, №17-18, էջ 74-77:
11. Բաղաց աշխարհի ճամփաներով, «Հայաստանի ֆիզ-կուլտուրնիկ» թերթ, 20.03.1971, №34, էջ 4:
12. Հայկական քարեդարան Թեոդոսիայում, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1972, №7, էջ 38-39 :
13. Ականավոր հայագետը (ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանի 60-ամյակի առթիվ), «Սովետական Հայաստան », ամսագիր, 1973, №4, էջ 26-27 :
14. Թարգմանիչը, բանաստեղծը, երգահանը Ստեփանոս Իմաստասեր Սյունեցի, «Պղնձի համար» թերթ, 16.08.1973, №98 (6514), էջ 3:

15. Վահանավանք, «Կանչ» թերթ, Բեյրութ-Լիբանան, 20.01.1973, №101, էջ 5:
16. Նորահայտ վիմագրություններ Հ.Այվազովսկու մասին, «Սովետական Հայաստան» թերթ, 3.10.1973, №40, էջ 4-5:
17. Ուկրաինացի ճարտարապետի վաստակը Ե.Մ.Պլամենիցկայա, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1974, №5, էջ 15-17:
18. Սևանի ավազանի պամական հուշարձանները, «Սովետական Հայաստան» թերթ, 1980, №2, էջ 3 :
19. Տաթև (ուղեցույց հայերեն և ռուսերեն լեզուներով), «Պատմական հուշարձանների պահպանման ընկերություն», 1981 :
20. Վահանավանք, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1982, №5, էջ 36 :
21. Վահանավանք (ուղեցույց հայերեն և ռուսերեն լեզուներով), «Պատմական հուշարձանների պահպ. ընկերություն», 1984:
22. Հայոց դպրության պանծալի օջախը, «Ավանգարդ» թերթ, 12.10.1984, №124, էջ 3:
23. Ваанаванк, «Советская Культура» газета, 18.10.1988, №125, ст. 3.
24. Ուր եք գնում, պարոնայք (բաց նամակ ՀՀ իշխանություններին), «Հայաստանի Կոմունիստ» թերթ, 28.11.1997, №47 (198), էջ 3 :
25. Սյունիքի թագավորությունը 10-12 դդ., «Սյունիք» թերթ, 10.11.1997, №39-40, էջ 6:
26. Վահանավանք, «Տաթև» ամսագիր, 1998, №2/4, էջ 13-14:
27. Մի արատավոր գրախոսության մասին, «Սյունյաց աշխարհ» թերթ, 28.02.2003, №5(72), էջ 4:
28. Սյունյաց պատմագիրը՝ Ստեփանոս Օրբելյան, «Սյունյաց աշխարհ» թերթ, 30.08.2003, №32, էջ 6:
29. Վահանավանքի խաչքարերը, «Սյունյաց երկիր» թերթ, 15.12.2012, №30 (271), էջ 98:

**ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ԵՎ ՆՐԱ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Ս.Սարգսյան, Խ.Դավթյան, Լավ օրինակի կողքին, «Ավանգարդ» թերթ, 31.12.1953, №156, էջ 2:
2. Վ.Սանուչարյան, Որպեսզի երեխաները լավ հանգստանան, «Պղնձի համար» թերթ, 2. 07.1966, №3, էջ 2:
3. Մ. Մինասյան, Պեղումները շարունակվում են, «Պղնձի համար» թերթ, 31. 08. 1968, №105, էջ 3:
4. Լեյլի Դշոյեան, Շնորհակալ աշխատանք, «Երեկոյան Երևան» թերթ, 20.12.1969, №281, էջ3:
5. Լեյլի Դշոյեան, Վահանավանք, «Պայքար», Բոստոն, «Ռամկավար ազատական» թերթ, 22.05.1970, №118, էջ 2:
6. Ար.Արրահամյան, Հայաստանի հնագետները Թեոդոսիայում, «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթ, 10.10.1971, №53, էջ4:
7. Ար.Արրահամյան, Գիտարշավ երբեմնի գաղթավայրերում, «Հայրենիքի ձայն» թերթ, 07.08.1973, №452, էջ 2:
8. Ս.Ա.Ավագյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը 9–13-րդ դդ-ում (գրախոսություն), ԼՀԳ, 1973, №9, 107–116:
9. Ար.Ալեքսանյան, Վահանավանք, «Մանկավարժ» թերթ, 17.10.1974, №20 (294), էջ 2:
10. Э.Задунов, Музей каменной летописи, газета «Коммунист», 17.02.1974, №32, ст.3.
11. Մ.Ոսկանյան, Վահանավանքը րացում է իր գաղտնիքները, «Սովետական Հայաստան» թերթ, 14.09.1975, №118, էջ 4:
12. Կ.Սուրենյանց, Բեկորներ, թանկագին բեկորներ, «Սովետական արվեստ» ամսագիր, 1977, №12, էջ 27–35:
13. Էդ.Զոհրաբյան, Վերականգնվում են հուշարձանները, «Ավանգարդ»թերթ, 15.08.1979, №97, էջ 2:
14. Ս.Բարաջանյան, Բարակերտով ավերագրերի էջերում, «Ավանգարդ»թերթ, 4.12.1979, №132, էջ 3:
15. Ար.Սաղոյան, Պեղումներ Վահանավանքում, «Ավանգարդ», թերթ 15.11.1980 , №124, էջ 3 :

16. Ալ. Հարությունյան, Ուսանողների ջանքերով, «Մանկավարժ» թերթ, 14.11.1980, №30, էջ 2:
17. Ա. Աղամյան, Եվ խոսեց տաճարը, «Ղափան» թերթ, 08.01.1981, №4 (7668), էջ 2:
18. Բ. Սիմոնյան, Պատմության քարե վկաները, «Ավանգարդ» թերթ, 11. 09.1983, №109, էջ 2:
19. Վ. Վ. Ավետյան, Դարերի ճշմարիտ իրողությունը, գրախոսություն «Դրվագներ Սյունիքի պատմության 9–15-րդ դդ.» ռուսերեն մենագրության մասին: «Երեկոյան Երևան» թերթ, 16.03.1992, №51, էջ 3 :
20. С.Г.Геолецян, «Слова увековеченные в камне», Украина, Молдова, печ. « Республика Армения» газета, 20.11.1996, №231, ст. 2.
21. Ս. Գ. Կարապետյան, Դիվան հայ վիմագրության, պր. 7, Ուկրաինա-Սովետական, կազմեց Գ. Մ. Գրիգորյանը, գրախոսություն, ՊԲՀ, 1998, №1–2, էջ 263–266:
22. С.Г.Геолецян. Цветы завянут, камень останется «Свода армянских надписей» (Российская федерация), «Новое время» газета, 6.04.1999, №503, ст 6.
23. Գ. Ե. Կիրակոսյան, Դիվան հայ վիմագրության, պր. 8, Ռուսաստանի Դաշնություն, կազմեց Գ. Մ. Գրիգորյանը, գրախոսություն, ՊԲՀ, 1999, №2–3, էջ 408–409 :
24. Գ. Սարգսյան և Հ. Մելքոնյան, Անցած ուղի, Գ. Գրիգորյանի ծննդյան 70-ամյակի առթիվ, «Հայաստանի Հանրապետություն» թերթ, 8.03.2000, էջ 7 :
25. Ս. Ստեփանյան, Արժեքավոր հրատարակություն, «Սյունյաց աշխարհ», թերթ, 30.06. 2002, №16(54), էջ 7:
26. Миронов Владимир Николаевич, О монографии профессора Григоряна «Род Орбелянов и история Сюника в 9–15 вв.», Москва, «Культурная ревалюция», 2004, 328 с.
27. Գ. Սարգսյան և Հ. Մելքոնյան, Հայոց վիմագրերի նորոշյա տարեգիրը, «Սովետական Հայաստան» թերթ, 2.03. 2005, №37:
28. Վ. Օրբելյան, Չորս տասնամյակի պրպտումների արգասիքը, «Սյունյաց երկիր», 15.02/2009, №4, էջ 5–8:
29. Գ. Սարգսյան, Վաստակաշատ գիտնականը (Գ. Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի առթիվ), ՊԲՀ, 2010, №2, էջ 285–290:

30. Հր.Բալոյան, Ուսուցչապետը, Գ.Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի առթիվ, ԼՀԳ, 3.09.2010, էջ 373–376:
31. Վ.Օրբելյան, Կյանք՝ նվիրաբերված քարակերտ մատյանների վերծանմանը, «Սյունյաց երկիր» թերթ, 15.12.2012, №30 (271), էջ 90:
32. Հր.Բալոյան, Նա համակ սեր է դեպի իր ազգը, իր ժողովուրդը, մարդն առհասարակ, «Հայաստան» թերթ, 2.04.2010, №1, էջ 1–3:
33. Աշ.Մանուչարյան, Վահանավանքի վիմագրերը, «Սյունյաց երկիր» թերթ, 15.12.2012, №30 (271), էջ 88:
34. Աշ.Մանուչարյան, Վահանավանքի վիմագրերը հայ եկեղեցու պատմության սկզբնաղբյուրներ, «Տարեգիրք», Ը, ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ, 2013, էջ 107–113:
35. Мери Чолакян, Охотник за древностями, «Мост» газета, 29.05.2014, №5(22), ст. 2.

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐԹԵՐ

1. Դիվան հայ վիմագրության 6-րդ պրակ, Իջևանի շրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977:
2. Դիվան հայ վիմագրության 9-րդ պրակ (խմբագրական խորհրդի կազմում) ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 2012:
3. Լ.Սարգսյան, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9–14-րդ դարեր), Երևան, 2007, 138 էջ:
4. Աշ.Մանուչարյան, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (9–14րդ) ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 238 էջ:
5. Աշ.Մանուչարյան, Սաղմոսավանք, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 183 էջ :
6. Աշ.Մանուչարյան, Կոշավանք, ՀՀ ԳԱԱ, Երևան, Լուսաբաց հրատ., 2015, 68 էջ :

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵՊՀ	- Երևանի պետական համալսարան
Եր.	- Երևան
ՀՀ ԳԱԱ	- Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
ԼՀԳ	- Լրաբեր հասարակական գիտությունների
ВОН	- Вестник общественных наук
ՊԲՀ	- Պատմա-բանասիրական հանդես
ИФЖ	- Историко – филологический журнал
М.	- Москва

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան	5
Գրիգոր Գրիգորյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը	11
Աշխատությունների ժամանակագրական ցանկ	12
Գրքեր	12
Հոդվածներ	15
Թերթերում և ամսագրերում տպագրած հոդվածներ	26
Գրիգոր Գրիգորյանի և նրա ստեղծագործությունների մասին	28
Գրիգոր Գրիգորյանի խմբագրությամբ հրատարակված գրքեր	30
Հապավումների ցանկ	31

346 ր.

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0622153

π
A 105716

ISBN 978-9939-9208-4-9



9 789939 920849